Netherlands Institute for Multiparty Democracy

Հարցաթերթ
Դիմիտրի Լորթքիփանիձե /
Նինո Բուրջանաձե –միասնական ընդդիմություն

Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

Մեր գերակայություններն են. մարդ, ընտանիք, միջավայր: Տեղական բյուջեն ճիշտ դրանց վրա պետք է ծախսվի: Շարունակվում է տգեղ պրակտիկան՝ նոր իշխանության ներկայացուցիչներն էլ, ինի նման, չափից ավելի բարձր աշխատավարձ և պարգևներ են ստանում: Օրինակ, այսօր, մանկավարժի միջին աշխատավարձը 400-500 լարի է, երբ «Թբիլիսիի զարգացման հիմնադրամի» հասարակայնության հետ հարաբերության ծառայության պետը ամեն ամիս ունի 4-ից 5 հազար լարի վարձատրություն: Եվ այս պաշտոնը բոլորովին էլ ամենաբարձր վարձատրվողը չէ Թբիլիսիի քաղաքային ծառայություններում: Անթուլատրելի է, որ քաղաքային ծառայության աշխատակիցները մանկավարժի աշխատավարձից տասն անգամ ավելի աշխատավարձ ստանան:
Մենք կհասնենք այն բանին, որ տեղական բյուջեն լինի կողմնորոշված քաղաքացիների և ոչ թե տեղական աստիճանավորների վրա: Բյուջեի տնտեսման աղբյուրներ գոյություն ունեն: Օրինակի համար, բյուջեի ուռճացած ծախսերը լրջորեն կկրճատի ասստիճանավորների անձնական ավտոմեքենաներից հրաժարվելը: Գոյություն կունենա միայն միասնական, մունիցիպալային սահմանափակ ավտոկայան: Այս առաջարկությունը պետք է կիսի նաև կենտրոնական իշխանությունը, որպեսզի պետական բյուջեն միլիոններ տնտեսի:
Տնտեսումը վերաբերում է պարգևատրման գումարներին, որոնք նոր իշխանությունը, ինչպես հինը, նույնպես կանոնավոր կերպով ստանում է:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսին ունեք):***

Առաջին հերթին, պետք է ստեղծվի քաղաքի զարգացման երկարաժամկետ գլխավոր պլան՝ «Թբիլիսիի Սահմանադրություն», որը երկար ժամանակ է մեր մայրաքաղաքի համար չի արվել:

3. ***Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:***

Տնտեսական զարգացման կարևոր խոչընդոտող գործոնը քաղաքական անկայունությունն է և բարձր հարկերը: Հարկավոր է ներդրումներ գրավել, որը խոչընդոտող ամենամեծ պատնեշը

քաղաքում գոյություն ունեցող քաղաքական անկայունությունն է: Դրա հաղթահարման և հարկային քաղաքականության կարգավորման դեպքում կարճ ժամանակում հնարավոր է արագ տեմպով սկսել երկրի տնտեսական զարգացումը:

4. ***Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները /գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար:***

Աշխարհագրական դիրքը, Անդրկովկասի և մյուս հարևան երկրների համար որպես բնական «կենտրոն» ձևավորումը, մշակութային ժառանգությունը և 21-րդ դարի քաղաքային զարգացման միտումների բանական համադրումը գրավիչ է դարձնում մեր մայրաքաղաքը ինչպես տնտեսական զարգացման համար անհրաժեշտ ներդրումների ներգրավման, այնպես էլ քաղաքային զարգացման տեսանկյունից:

5. ***Ինչպիսի՞ն Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:***

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

6. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավմանը, ներդրումների գրավմանը նպաստելու համար:***

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիներին ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:***

Քաղաքացիներին լավագույն կենցաղային պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մեր մայրաքաղաքը ձևավորել որպես միտեսակ «իմաստուն» քաղաք» („Smart city”),ինչը իր մեջ պարունակում է խելամիտ տնտեսություն (կոնկրետ միջավայրի ապահովում), խելամիտ ժողովուրդ (սոցիալական և մարդասիրական կապիտալ), խելամիտ տեղական կառավարություն, խելամիտ շարժունության (տրանսպորտ, հաղորդակցություններ և ինտեռնետ-տեխնոլոգիաներ), խելամիտ միջավայր (բնական ռեսուրսներ) և խեելամիտ կյանք (կյանքի որակ):

8. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:

Քաղաքի փողոցների մաքրության բարելավումը տարբեր հարցերի միատարր կոմպլեքս է, մասնավորապես, կենցաղային և շինարարական մնացորդների վարման պարզեցված համակարգի ստեղծում, կենցաղային մնացորդների առաջնային տարանջատում քաղաքացիների կողմից, երկրորդային վերամշակման արտադրության զարգացում և, որ գլխավորն է, երեխա հասակից մեր համաքաղաքացիների կուլտուրայի ձևավորում մաքուր բնակելի միջավայրի ստեղծման և զգուշության տեսանկյունից:

Ենթակառույց և տրանսպորտ

9. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:

Հասարակական տրանսպորտային համակարգի բարելավման հարցը պետք է քննարկվի մայրաքաղաքի վերակառուցման և հեռանկարային զարգացման պլանի հետ կորելացիայում (որը ներկայումս գոյություն չունի): Առավելությունը պետք է շնորհվի մետրոպոլիտենի ցանցի ընդլայնմանը, պետք է վերանայվի և վերամշակվի է Թբիլիսիի միասնական տրանսպորտային քաղաքականությունը, որը պետք է նախատեսի մայրաքաղաքի լանդշաֆտի հետ հարմարեցված էկոլոգիապես անվտանգ երթևեկող տրանսպորտային կազմի կայանի ստեղծում, մետրոյի կայարաններից կարճ (այսպես կոչված «ճոճանակային») երթուղիների վերամշակում:

10. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:

Տարօրինակ է, բայց մայրաքաղաքը չունի ճանապարհային երթևեկության անվտանգության միասնական քաղաքային (մունիցիպալային) ծառայություն:Չափազանցված օրինակ, ծառի ճյուղը, որը ծածկում է լուսանշանը, պատկանում է կանաչապատման ծառայությանը, լուսանշանը «պատկանում է» մունիցիպալային ՍՊԸ-ին, ճանապարհը «պատկանում է» մեկ ուրիշ ծառայության, իսկ պարեկային ոստիկանությունը՝ ՆԳՆ-ին: Դրանց միջև հաստատվել է գերատեսչական «Ինձ չի վերաբերում» սկզբունք: Այսինքն՝ առանձին վերցված բոլոր գերատեսչությունները արդարացի են, սակայն հաճախ խախտվում է շարքային վարորդի շահը: Ճանապարհային երթևեկության անվտանգության ցուցիչի վրա նշանակալի ազդեցություն է գործում նախորդ իշխանության կողմից վարորդական վկայականի

ձեռքբերման չափից ավելի հեշտ լինելը և ցածր որակավորման պահանջները: Վարորդական վկայական ստանալու համար անհրաժեշտ գիտելիք (ունակություններ-կարողություններ) ձեռք բերելը կատարվում է համացանցով, իսկ գործնականում վարելու ունակություն-կարողությունների մշակումը հաճախ կատարվում է պատահական անձանց մոտ:

11. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:

Սահմանափակ կարողություններով անձանց համար հարկավոր է մշակել միասնական քաղաքականություն, ինչը նրանց հասարակական շարժունությունը կբարձրացնի: Նախ և առաջ անհրաժեշտ է նրանց հարմարեցված ստորգետնյա և վերգետնյա անցումների սարքավորում, քաղաքային տրանսպորտում նրանց հատուկ տեղերի հատկացում, ինչպես նաև տրանսպորտ բարձրանալու-իջնելու հատուկ վերելակների առկայություն, ճանապարհների և մայթերի վրա հատուկ թեքահարթակների և կույրերի համար հատուկ ձայնային-ճանապարհային նշանների ստեղծում:

Մշակույթ և կրթություն

12. Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար::

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

Գլխավոր ուղղությունը կլինի կենտրոնական բյուջեից ֆինանսավորվող պետական ծրագրերով հայտարարված երաշխավորությունների հագեցումը տեղական բյուջեների վարկերով բոլոր կենսաթոշակառուների և անօգնականների համար, նրանց անհրաժեշտ դեղորայքի համար ամսեկան 20-լարիանոց հավելում տալը:

Ավելի շատ միջոցներ կօգտագործենք հաշվարկի և տարրական ապրուստի պայմաններով (ապաստարան, սնունդ, անձնական հիգիենա) ապահովելու համար,

Առողջապահության ոլորտում ավելի շատ ուշադրություն կդարձնենք պրոֆիլակտիկ բնույթի և հիվանդությունների վաղ հայտնաբերմանը ուղղված սկրինինգային ծրագրերի իրականացմանը (տարիքային խմբերի, գործունեության հետ կապված կամ գենետիկ ռիսկերի համաձայն),

Կհոգանք միջավայրի (ջրի, օդի, բնահողի, սննդի) մաքրության այնպիսի վերստուգիչ միջոցառումների պլանավորման և իրականացման համար, որոնք համակարգված կլինեն կենտրոնական իշխանության համապատասխան գործունեության հետ և կլրացնեն այն:

Կհոգանք այն մասնագիտական խմբերի վարձատրության պայմանների բարելավման համար, որոնց պարտականության մեջ է մտնում սոցիալական երաշխիքների (առողջապահության, կրթական) մատուցումը բնակչությանը (բժշկական օգնության առաջնային գծի աշխատակիցներ – ամբուլատորային-պոլիկլինիկային ցանցի բժիշկներ, քույրեր, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցներ, մանկավարժներ, նրանց հավասարեցված անձինք, գրադարանների աշխատողներ):

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Ավելի շատ միջոցներ կծախսենք անօթևանների հաշվարկի և տարրական ապրուստի պայմաններով (ապաստարանով, սննդով, անձնական հիգիենայով) ապահովելու համար,
Կիրականացնենք մատչելի բնակելի տարածքով ապահովման պետական ծրագիր:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Մայրաքաղաքի օդային ավազանի հիմնական աղտոտիչը ներկայացնում են տրանսպորտային միջոցները (պաշտոնական տեղեկությամբ՝ 95%): Վրաստանում գրանցված 900 000 ավտոմեքենաների 80%-ից ավելին 15-18 տարուց ավելի տարիք ունի, Վրաստանում պարտադիր չէ ավտոմոբիլային վառելիքի որակի ստուգումը, խրախուսված չէ էկոլոգիապես անվտանգ, վառելիք-արդյունավետը և նոր ավտոմեքենաների ներկրումը, արմատավորված չէ ավտոմեքենաների վառելիք-տնտեսող ոճով («էկոդրայվինգ») երթևեկության ունակություն-սովորությունների ձեռքբերումը: Վերը ասված այս ամենի ուղղման համար պետք է ստեղծվի տրանսպորտային միջոցների արտամղումներից մթնոլորտային օդի պաշտպանության պետական ծրագիր, ինչը վերը թվարկածներից բացի,նախատեսում է նաև մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի արդյունավետ համակարգի ստեղծում:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Առաջին հերթին, շտապ կարգով պետք է հայտարարվի մորատորիում մայրաքաղաքի գոյություն ունեցող մունիցիպալային պուրակներում և զբոսայգիներում, հանգստյան գոտիներում ցանկացած կարգի մեգաշինարարությունների և ծառահատումների վրա: Բացի դրանից, այսօր գոյություն ունեցող նորման (մեկ բնակչի հաշվով մոտավորապես 8 քառ. մ կանաչ հիմնադրամ) պետք է ավելանա մինչև մեկ բնակչի հաշվով 20-24 քառակուսի մետր: Թբիլիսիի զարգացման գլխավոր պլանում առանձնահատուկ տեղ պետք է հատկացվի կանաչապատման միասնական համակարգի ստեղծմանը, գոյություն ունեցածի պահպանմանը և քաղաքի սահմանի մերձակա լանջերի առավելագույն կանաչապատմանը, տնկիների խնամքի համար անհրաժեշտ պարզ ոռոգման համակարգի ստեղծմանը, բոլոր շրջաններում նոր մեծ զբոսայգիների ստեղծմանը և այլն:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Նոր շինարարությունների ժամանակ սպորտային-հանգստյան գոտիների հաշվառումը պետք է վերածվի դեվելոպերային անհրաժեշտ պարտավորության: Իսկ տեղական

ինքնակառավարումը պետք է ստեղծի այդպիսի գոտիների շինարարությունների խրախուսման և աջակցության արդյունավետ մեխանիզմներ տեղական օրենսդրության մակարդակով:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Այսօր հետիոտնին հատկացված ենթակառույցը (մայթերը) զբաղեցրել են մայրաքաղաքի ավտոկայանման օպերատոր ընկերությունը, տարբեր ծավալի ճարտարապետական ձևերը և դրսի վաճառորդները: Մայթերը պետք է վերադարձվեն հետիոտնին:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային խցանների կրճատման նպատակով:

Ավտոմոբիլային երթևեկության կարգավորման համար քաղաքապետարանի գոյություն ունեցող ծառայություններում պետք է ստեղծվի երթևեկության կազմակերպման կառուցվածք, իսկ խցաններից ազատվելու նպատակով շտապ կարգով պետք է իրականացվի մայրաքաղաքի լայնակի տրանսպորտային-հաղորդակցական արդեն գոյություն ունեցող նախագծերի իրականացում (օրինակ, 1968-2000թթ. Գլխավոր պլանով նախատեսված և 80-ական թվականներին սկսված Վախուշտի կամրջի և փողոցի Էստակադայի շարունակում Նաձալադևիի ուղղությամբ), Հերոսների հրապարակի տրանսպորտային հանգույցի կատարելագործում (այս մեգանախագիծը մայրաքաղաքի վրա նստեց 150 միլիոն լարի, սակայն խցանները «Լագունա Վերայի» մոտ չլիցքաթափվեցին: Պետք է դադարեցվի միանգամայն չարդարացված պրակտիկան հրապարակների վաճառման (Սահմանադրության հրապարակը «Աջարիա» հյուրանոցի առջև) պրակտիկան: Նմանապես արդարացված չէ Սպորտի պալատի շուրջը իրականացված անսիստեմ շինարարությունը առանց հաշվի առնելու տրանսպորտային ենթակառույցը: Այս տեսակետից ամենագլխավորն է. մայրաքաղաքի զարգացման գլխավոր պլանի ստեղծումը, որը նախատեսված է առնվազն 3-4 տասնամյակների հաշվով և այն պայմանականորեն կարող ենք անվանել «Թբիլիսիի Սահմանադրություն»: Դա պետք է լինի քաղաքի պլանավորման խիստ փաստաթուղթ, որը մայրաքաղաքի մասշտաբով բացառում է առանձին անձնավորությունների կամքով չարդարացված քաղաքային նախագծերի և շինարարությունների իրականացումը: Այս գլխավոր պլանի ստեղծումը այս գումարման սակրեբուլոյի գլխավոր «Մարտական խնդիրը» և նպատակը պետք է դառնա:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել փողոցային կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

Փողոցային կենդանիների հիմնախնդիրները կարգավորելու աշխատանքը պետք է անցկացվի երկու ուղղությամբ. Մի կողմից, ամեն ջանք պետք է գործադրենք, որպեսզի կենդանին չանցնի անտեր շների շարքերը և, մյուս կողմից, կարգավորենք արդեն գոյություն ունեցող փողոցային կենդանիների հիմնախնդիրները:
Պետք է ընդունվի օրենք պատասխանատու տերերի մասին,
Պետք է տեղի ունենա տեր ունեցող և անտեր կենդանիների բազմացման վերահսկում,
Պետք է կատարվի կենդանիների գրանցում, կատաղության դեմ պարտադիր սրսկում, անտեր կենդանիների մարդասիրական մեթոդով բռնում, նրանց տեղավորում ժամանակավոր ապաստարաններում ախտահանման և վակցինացիայի համար, ոչագրեսիվ կենդանիների վերադարձ սովորական միջավայր:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Պետք է տեղի ունենա այդպիսի շինարարությունների գույքագրում և աուդիտ, պետք է անցկացվի շինարարական-ինժեներական փորձաքննություն և որպես միանվագ միջոցառում՝ որոշվի գերակայությունները և շինարարությունների փուլային ավարտը: Ինչ վերաբերում է վթարային տներին և դրանց քանդման ռիսկերի համարյա ամենօրյա ավելացմանը, պետք է ստեղծվի մի տեսակ քաղաքային-մանեվրային հիմնադրամ, որը կկիրառվի այսպիսի վթարային տները քանդելով տուժածների համար ժամանակավոր բնակատեղիների համար,իսկ ապագայում պետք է ստեղծվի անշարժ գույքի մունիցիպալային ապահովագրական համակարգ:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար:

Թբիլիսիի պատմական կենտրոնը ամբողջությամբ ներկայացնում է մշակութային ժառանգության հուշարձան: Նրա արտաքին տեսքի խեղաթյուրումը ուղղակիորեն պետք է հավասարեցնենք մշակութային ժառանգության հուշարձանների ոչնչացման փորձի հետ: Հայտնի է՝ առանց նորույթների քաղաքը չի զարգանա, սակայն հին քաղաքի հյուսվածքում չպատկերացված ճարտարապետական փորձաքննությունների ժամանակաշրջանը պետք է ավարտվի: Նպատակահարմար ենք գտնում նոր ճարտարապետական նմուշների քաղաքի կենտրոնից տեղափոխել քաղաքի ծայրամասեր, որով էլ իսկապես կաշխուժանա նոր մշակութային օջախների առաջացումը: Թբիլիսիի քաղաքապետարանի և սակրեբուլոյի

գերակայող խնդիր պետք է դառնա պատմական կենտրոնի վերականգնումը այնտեղ բնակվող քաղաքացիների շահերի հաշվառումով:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Շրջանցիկ երկաթգծի շինարարությունը այլընտրանք չունի, թերևս ներկայումս կառուցվող գիծը շատ վատ որոշում է իր թանկության, բարդ լանջերով անցկացման պատճառով ցածր շահագործողական արագության, Թբիլիսիի ծովի մոտակայքի և դրանից ելնելով, Թբիլիսիի խմելու ջրի մատակարարման համակարգիի ռիսկերի ավելացման պատճառով: Երկաթգծի շինարարությունը պատշաճ, ճիշտ հաշարկի վրա հիմնված ուղղումներով, պետք է շարունակվի:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Վակեի զբոսայգում, ինչպես նաև Ասաթիանիի փողոցի վրա (նախկին հոգեբուժական հիվանդանոցի տարածքի) գոյություն ունեցող շինարարությունները, միանշանակ պետք է դադարեցվեն, որպես գործող օրենսդրության հետ անհամատեղելի և քաղաքի էկոլոգիային անուղղելի վնաս բերող: